ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Հայոց բանակի օրվա առթիվ

28.01.2017թ

Հարգելի հայրենակիցներ

Հայոց բանակը հայ ժողովրդի դարավոր երազանքների ծնունդն է եւ համազգային պայքարով կերտված այն միակ ու անկրկնելի արժեքը, որի շնորհիվ կարողանում ենք դիմագրավել բոլոր արտաքին սպառնալիքները, ապահովել հայրենի երկրի անվտանգությունը, խաղաղ ու ստեղծագործ կյանքը:

2016 թվականի ապրիլյան հերոսամարտերը եւս մեկ անգամ ապացուցեցին հայ զինվորի անպարտելիությունն ու քաջությունը, նվիրվածությունը հայրենյաց հողի պաշտպանության, Արցախյան ազատամարտում հազարավոր հայորդիների կյանքի եւ արյան գնով ձեռք բերված հաղթանակների պահպանման սուրբ գործին:

Շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի օրվա առթիվ, ցանկանում խաղաղ երկինք, քաջ առողջությամբ, հաջողությամբ ու երջանկությամբ լի տարիներ, Հայոց բանակի զինվորներին ու սպաներին՝ խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Ձերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան